

ի յուխտ իւր եւ ի սուրբ եկեղեցիս իւր, գոր պատուական արեամբն իւրով ստացաւ. — էջ 247:

Տես Ա. 36: Գ. 16:

31. — Տէր Աստուած զօրութեանց, որ արարեր զամենայն արարածս յոչընչէ, եւ ստեղծէր զմարդ ի հողոյ կենդանի եւ անապականացու, եւ անցին զրոյով պատուիրանսօրդ, եւ անկան ի մահ՝ իւրեանց պատուիրանազանցութեամբն. — էջ 282:

Տես Բ. 2: Գ. 7:

32. — Արք եւ կանայք պղծութեամբ ճիւղալուրբաւմբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով, եւ կամ զալիս հարկանելով, զմեռալսն յուղարկէին. — էջ 290:

Տես Ա. 18: Գ. 21:

33. — Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրօնազգեսաց, մեծակեաց, անապատականաց, լեռնական սքանչելի. — էջ 333:

Տես Գ. 30:

34. — Առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամենայն աւուրս կենաց իւրոց. — էջ 339:

Տես Գ. 29:

35. — Ի քարանձաւս ամրացեալք յայտս եւ ի քարածերպս երկրի, եւ միահանդերծք բոկազնացք զգաստացեալք խոտանարակք ընդարուտք արմատակերբ. — էջ 340:

Տես Գ. 16:

Փաւստոսի Հայոց Պատմութիւնէն մէջբերուած վերոգրեալի հատուածները բաւարար կրնան սեպտուիլ երաշխաւորելու թէ սոյն գրքին հեղինակութիւնը կը պատկանի Կորիւն Վարդապետին:

Հետեւաբար, լեզուի եւ ոճի ակնբախ համանմանութեան վրայ հիմնուելով, պիտի եզրակացնենք թէ վերոյիշեալ չորս երկերը — Վարք Մաշտոցի, Վարդապետութիւն Ս. Գրիգորի, Պատմութիւն Ազաթանգեղոսի, եւ Պատմութիւն Փաւստոս Բուզանդի — կը պատկանին միեւնոյն հեղինակի՝ Կորիւն Վարդապետի մտքին եւ գրչին. «Քանզի ի նմանութիւնէն տապաքէն լինի ճշմարտութիւն խնդրելի», ինչպէս ինքն իսկ Կորիւն կը յայտարարէ (Բ. 12):

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Հայ միջնադարեան գրականութեան նոր դարաշուխարհ բացուած է մեր մեծագոյն բանաստեղծ Գրիգոր Նարեկացու (951–1003) ստեղծագործութեամբը:

Գրիգոր Նարեկացին ծնունդ է գեղածածաղ վանայ լճի հարաւային ափերէն գտնուող գիւղերից մէկում: Նրա կեանքը գրեթէ իր փոքր հասակից կապուած է Ռշտունեաց աշխարհի Նարեկ գիւղի վանքի հետ, որից և իր Նարեկացի կոչումը:

Նարեկայ վանքի հոգեւոր պետերէն շատ անհանգստութիւն պատճառուած է իրեն, հակառակ օր վանահայրն էր իր իսկ մօրեղբայրը՝ ժամանակի յայտնի գիտնական-փիլիսոփայ Անանիոս Նարեկացին:

Հնագոյն ձեռագիր կենսագրականներում և բանաստեղծի ուրոյն գործերում եղած ինքնակենսագրականներում, բնոյթի յիշատակութիւններում, Նարեկացու կեանքի մասին պահպանուել են ոչ շատ, բայց հաւաստի ու ճշգրիտ տեղեկութիւններ. Նրա բուն ուսումնասիրութիւնը անցել է Նարեկայ վանքի մ. դարում շատ հռչակուած դպրոցում, ուսումնասիրելով և իւրացնելով դպրոցի մատենագրարանում գտնուող թարգմանաւանկն թէ ինքնուրոյն մեծ թիւով կրօնա-փիլիսոփայական ձեռագիր գրականութիւնը: Այդպիսով Նարեկացին հետադարձում դառնում է այդ դարու առաջաւոր ուսման այդ կենտրոնի հիմնաւոր սիւներից մէկը:

Անդադառնալով Նարեկացու բուն վանական կեանքին, թէպէտ շատ հարուստ է բազմազան դէպքերով ու պատահարներով, սակայն շատ խաղաղ ու հանդարտ էլ էն անցել առանց բուն ալիկոծմաների: Նարեկացու ժամանակ, գնալով ուսման դարձում էր աշխատանքութեան բռնապարտ ֆէոդալականութեան ու եկեղեցւոյ դէմ: Նոյն ժամանակ, եկեղեցին

ևս իր հերթին խստորէն հաշիւ էր տեսնում իր հակառակորդների հետ, որով շատերն էին կասկածուած և մեղադրուած թոնդրակեցութեան մէջ ու ենթարկուած դատանի հալածանքներին:

Անանիա և Գրիգոր Նարեկացիները ևս զերծ չեն մնում նման մեղադրանքներից ու հալածանքներից: Համաձայն հին կենսատեղրականներում տրուած տեղեկութիւնների, Գրիգոր Նարեկացին շատ քննադատաբար էր վերաբերուած հոգեւորականաւթեան գէմ: Հէնց դրա համար, բիրտ ու ազէս ժարգիկ լուր են տարածուած թէ նա աղանդաւոր է: Ուրեմն մի վայր են հաւաքուած եպիսկոպոսներ ու իշխաններ, ազատներ ու տանուէրներ, օրպէս զի հրապարակով յանդիմանեն Նարեկացուն և յետոյ պատուհասեն՝ աքսորելով նրան օրպէս հերձուածող:

Մեզի համար ստույգ յայտնի չէ, թէ ինչպէ՞ս է յաջողուել Նարեկացուն աղատուել իրեն դատելու կազմուած Ատանից, կամ եթէ նոյնիսկ ներկայացել է, ինչպէ՞ս է ինքզինքը արդարացրել: Այդ դէպքի շուրջ պահպանուել են միայն մի շարք ժողովրդական կամ վիպական երգեր ու լեգենդներ, որոնց մէջ օրբացուած է իրենց արամադրութիւնների արտայայտիչ բանաստեղծը և նրա փրկութեան կապուած իրերը նրա գարուց հրաշքների հետ:

Ժ. դարու առաջին տասնամիակին և բուն, Բագրատունի Աշոտ Բ. ի (Նրկաթ) փոթորկալից տարիներից յետոյ, երկիրը թեւեղութեամբ էր իր անցեալի պատմութեան մէջ նախադէպ չունեցող հարիւրամիայն խաղաղ մէջ շրջան: Այդ տարիների ընթացքում, բաւականաչափ զարգացուած է տնտեսական կեանքը, ծաղկում ու բուրգաւանդում են բաղամթիւ ու բաղամարդաղաղքներ, որոնք մեքենայութիւն դառնում են ահեհասաւորական արդիւնաբերութեան և միջազգային լայն կենտրոններ: Առհասարակ ժողովրդի սանդղագործական հնարանագրութիւնները իրենց ցայտուն դրսեւորումն են ստանում մշակոյթի տարբեր բնագաւառներում: Առանձնապէս բուռն վերելք է ապրում հայ ճարտարապետութիւնը: Ժամանակի պատմիչների գործերում արդէն իսկ մեծ տեղ են բռնում

նուաճող ճարտարապետական մօնումենտների ոգեշունչ ու հիացական նկարագրութիւնները:

Որքան ժամանակաշրջանի համար շատ ընդուն է նաև աշխարհիկ պատմագրութեան, գիտութիւնների և այլ արուեստների զարգացումը: Քաղաքների զարգացմանը զուգահեռ, ֆէոդալականութեան դէմ շատ զօրաւոր պայքար էր տեղի ունենում գիւղում: Զափաղանց օրուել էին դասակարգային հակասութիւնները, այնպէս որ դործը յաճախ հասնում էր զինուած ընդհարումների: Գիւղացիների բուն պայքարը ուղղուած էր մանաւանդ ֆեոդալ բարձրաստիճան հոգեւորականութեան ու վանքերի դէմ, որոնք այն ժամանակ հարուստ հողատէրեր են դարձել: Նրանք զանազան միջոցներով ու ճանապարհներով յափշտակում էին ամբողջ գիւղերի հողերը ու բունութեամբ և նշույթի վախով քնում էին գիւղացիներին նրանց դարաւոր ընկալաւորներից: Միջնադարեան պայմաններում, ֆէոդալիզմի դէմ ուղղուած գիւղացիական - աշխատավարկային յեղափոխական պայքարը առհասարակ երեւան է դալիս կրօնական քօզի տակ՝ աղանդաւորական ու միսթիկովի շարժումներում ձևով, որոնք առաջադրում և գաղափարապէս նախապատրաստում են զինուած պատաստմութիւնը: Այդ շրջանում հայ իրականութեան մէջ շատ լայն տարածում է ստանում թոնդրակեցիների աղանդը, որը շատ վերին աստիճանի արամատական բնոյթ ունէր: Այդ շարժման ղեկավարները ժխտում էին Քրիստոսին, Եկեղեցին՝ իր բոլոր Թորոն Արդիւններիով: Ժգարի փիլիսոփայ Գրիգոր Մարտիրոսը իր նամակներից մէկում ասում է թէ թոնդրակեցիները իրենց միացողներին ճանապարհածութիւն էին քարգուծում ինչպէս Եպիկուրեանները: Սրանից կարելի է ենթադրել, որ թոնդրական շարժման մէջ գուցէ եղել են մասերիայիսեական մտածողներ, որոնք ընդհանրապէս ժխտել են արարիչ Աստուծոյ գոյութեան գոյափարը:

Պատմական այսպիսի պարագաներում անշուշտ առաջանում են աշխարհիկ արամագրութիւններն ու կարծիքները, որոնց

միակ արտայայտիչը հղաւ Դրիզոր Նա-
րեկացիին :

Նարեկացուց մեզի մնացել են բուսական թիւով գրուածքներ: Նրա երկերից յիշատակուած են շատ հնագոյն կենսագրականներում, որոնց գրեթէ բոլորն էլ մեր ձեռքն են հասել: Դրանց թւումն են Վեկնուծ թիւն Երգաց Երգոյն Սողոմոնի, չորս ներբողներ (Նուիրուած Ս. Խաչին, Աստուածածնին, առաքեալներին և Յուկո Մծնայ եպիսկոպոսին), Ապրանիք Խաչի Պատմութիւնը, Գանձեր, Տաղեր (թիւով 25-ից աւելի), Վատեսան Ողբերգութեան՝ պոեմը, Թգթեր ու այլ գործեր: Նարեկացու երկերից լատագոյնները Տաղերն են և Վատեսան Ողբերգութեանը՝ ընարական մեծ պոեմը:

Նարեկացու Տաղերի մեծ մասը իրենց բուն գաղափարական ծագումով, բովանդակութեամբ և տրամադրությամբ ձևերով, կրօնական կաշկանդիչ շղթաները փշրող քնտրիքական առաջին և յատկանշական, փայլուն նմանակներն են:

Նարեկու ու Տաղեբը հանդիսանում են Ժ. դարում հասարակութեան մէջ առաջիւ ած հիւսմանիստակաճ արաժադրու թիւննրի աւելի աշառն արաշաշառն թիւնը, իրական կեանքի միառաւ ու իրօնական ոգուն հակառակ՝ ժարգաւ ժարմանական գեղի կութեան է, ինչու չէ, զգաժաւնքնրի պատկերումը։

Իրականութեան մէջ ճիշդ է, թէ Տաղերում մարդու ներքին աշխարհի, նրա մտածումների ու արարմանի պատկերները դեռեւս այնքան խոր չեն, բայց յետոյ, Վատեան Ողբերգութեաննուստ այն կանուսում է գերադասն ուժի ու բարձրութեան:

Մարգուս մարմնական գեղեցկությունն առթիւ Նարեկացու իտէալը սովորաբար մարմնաւորում է Տիրամայրը, բայց զաշատ դէպքերում առղերի լոկ վերնսգրային (որոնց հարազատութիւնը վիճելի է) նշումներից է երեւում: Յամենայն դէպս, բոլոր դէպքերում, նոյնիսկ բանաստեղծութեան մէջ, պատահելու է կանացի գեղեցկութիւնը ընդհանրապէս, հիմնականորեն տեղական, կենցաղային վրա երանգներով:

Գալով Աստուածամոր գեղեցկութեան մօտին շարականներում երգումներին, նրանք յաճախ կը տարբերուեն Աստուածամոր նկարագրից, նարեկացու մօտ տեսակները և համեմատութիւնները առաջացնում են ոչ թէ ինչ որ վերացական, եկեղային, անշուշտփնի գեղեցկութեան զգացողութիւն, այլ միանգամայն իրական, աստանայի գեղեցկութիւն:

Գրիգոր Նարեկացու առղերը արտա-
ցուում են լ. դարու հասարակութան
մէջ առաջացած հիւմանիստական արամա-
դութիւնները և մտածողութիւնը. ինչ-
պէս նաեւ մարդուն շրջապատող իրական-
ութիւնի հրապոյրների արժէքաւորումը:
Գաղթի Արարունու յանձնարարութեամբ,
Մանուէլ Էսքարաթյանի կերպած Ոսանի
պալատի և Աղթամարի սուրբ հկեղեցւոյ
աղկւնէն նկարագրութիւնները և նոյն
իսկ այդ հկեղեցւոյ բուն զարդաքանդակ-
ները ցոյց աւելիս են թէ ինչպիսի՝ մեծ
չափով այդ ժամանակաշրջանի մարդիկ
արդէն իսկ գիտակցում և ընդունում
էին բնութեան օրէնքն ու գեղեցիկու-
թիւնները:

«Ը պանդուխտան» տաղում բանաստեղծը, աշխինքն Նարեկացին, ռարախաբիամբ ու լիովին սգեորուած, ողջոյն է ապրիտ բարթաւօրէն յաւած ու ծաղկած ծառերին ու ծաղիկներին, յորդ աղբիւրների ու վտակներր կարկաջաւաջ ցրերին։ —

Աւետիս ծառոց ծաղկանց՝
Բողբոջախիւ, խիսասողարք,
Գոյն զեղեցիկ պօղիմաւէս
Ակնահանդ համ փաղբումսիկ,
Հոս բուրազուարք, փունջ խառնեռամ
Մայրից վարդից քրքրինազարդ
Թեք սօրածեալ ոսկեմոմանջ,
Տեղեալսիս կանաչագետալ ...

Գրիգոր Նարեկացին զարմանալիօրէն ցուցաբերած է մի զարմանալի նրբանկատութիւն, բացայայտելու և պատկերելու բնութեան տեղծած գոյների գեղագիտական հանդիպադրութիւնները, որոնց ամենանշանկաւոր երանգները սնգամ չեն սահում նրա տեսողութիւնից: Եթէ նկարագրում են թրղորոշութիւնը, «խիտառագարութիւն» ծառերը, ապա համաառարած կանաչ գոյնը աւելի է պայծառանում սկնահաճոյ:

քաղցրունակ պատուհների գոյնի ընդմիջումով, բայց եթե խոսքը ծաղիկների մասին է, ապա շտեպեմք կանաչու-թեան միջին դուրս է ցայտում փրթած վարդի շողունները՝ գոյնը և պոեզի-կական պատկերը կատարեալ է դառնում։ Սակայն Նորեկացու բնութեան պաշ-տամունքի, գեղեցկութիւնների գովեր-գութեան ամենացայտուն արտայայտու-թիւնը նրա Վարդավառի Տաղն է։ —

Գոհար վարդն վառ սուեալ
ի վեհից վարսից երփնից:
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային
ի համասարած ծովէն:

Պալպեր գոյնն այն ծաղիկն,
երփին երփնուեակ ծաղիկն
Շողոցիդ պսուղն ի ճղէն ...
Շուռենն շողիկ հովիտէն,
Շողոցիդ պսուղն արեգակեան ...
Շուռենն շողիկ լցեալ,
Շող-շողով եւ Եւր մարգարտով,
Ծաղկունդ ամեն շաղ աղին,
Շուրն յամպէն, ամայն յարեգակէն:

Եթէ անդրադառնալով համալսարան-ային գրականութեան պատմութեան, կը տեսնենք թէ Նորեկացին թերեւս առաջինն է, որ լայնօրէն օգտագործել է բաղա-ձայնների նմանաձայնութիւնը ոտանա-ւորի երաժշտականութեան համար։ Ուս-տի, այդ առումով, ամենադասական նմոշ-ները կարող են համարուել վերեւ մէջ-բերած «Ծննդեան» և «Վարդավառի» տա-ղերը։

Գրիգոր Նորեկացին նման բաղաձայն-ներով շատ հարուստ բառերի կուտակ-մամբ, երաժշտականութիւն առաջացնելու հակում է ցուցաբերում։ Այս ուղղու-թեամբ, Նորեկացու պոեզիական ար-ուեստը հասնում է այնպիսի մի բարձրու-թեան ու գիրքի, զոր Ի. դարի նշանա-ւոր բանաստեղծներն անգամ անկարող եղան գերազանցել։

Անշուշտ Նորեկացու բաղաձայնների յարդարումը բնաւ ճիշտով չէ արուած և ինքնանպատակ չէ։ Վտան կարող ենք ասել, որ դրանք բնաւ ձևապատկան բնոյթ չունեն և ոչ էլ թուլացնում են

բանաստեղծութիւնը, այլ ընդհակառակն, շատ աւելի արտայայտականութիւն են տալիս բովանդակութեանը, շատ յաճախ առաջացնելով բնածայնական երաժշտական պատկերներ։ Շատ են դրա օրինակները։ Ահա նշանաւոր «Ծննդեան» տաղի սկիզբը։

Այնք ծով ի ծով ծիծաղախիս

Ծաւալմար յառաւօտուն ...

Այստեղ եթէ լիովին անդրադառնանք տաղին, կը տեսնենք թէ ընտրուած են այնպիսի բառեր, որոնց թողած լսողա-կան տպաւորութեան մէջ իշխում է ձծ-բաղաձայնը։ Նախ կարող ենք ասել, որ շատ բնական են «աչք» բառի վրայ դրուած ձծովն մակդիրին յաջորդող ձծիծաղախիտն և «ծաւալմար» բառերը։ Միանգամայն իրական պատկեր է օտեղծուած առաւօտ-եան ծագող արեւի շողերով փայլատակող ծովի, որը շատ աւելի տեսնելի է դար-ձընում աչքերի արտակարգ գեղեցկու-թիւնը։ Յետայնոյ ձծնելով շատ հարուստ բառերի նման դասաւորութիւնը ստեղ-ծում է նաև լսողական պատկեր։ Արդեօք այստեղ չի՞ լուրւած շատ սովորակա-ն առաւ-տեան հանդարտ ծովի ջրերի մեղմ ծիծաղը։ Երաժշտութիւն ստեղծելու նպա-տակով բաղաձայնների օգտագործման դա-սական օրինակ է նաև «Վարդավառի» տաղը։

Սակայն Նորեկացին հայ և համաշ-խարհային գրականութեան մէջ աւելի շատ հռչակ է ստացել իր «Մատենան Ող-բերգութեան» հանձարեղ պոեմով, որ պատկանում է բարձր դարերում մարդ-կութեան ստեղծած գեղարուեստական մե-ծագոյն արժէքների թուին։

«Մատենան Ողբերգութեան» ոլոմի գորգացման ընթացքը շատ բարդ է ու դժուար ընկալելի։ Իրա բուն պատճառ-ներից մէկն այն է, որ Գր. Նորեկացին միանգամայն տարբերակով քնտրական պոեմների միւս հեղինակներից, բնաւ չի օգտագործել պոետիզմական ոյժերի տար-բեր։ Նորէն պոեմն ունի իր սկիզբն ու վախճանը, ներքին զարգացման կռաւ միասնութիւնը և ամբողջականութիւնը։ Ամենապարզ ու ամենամոտոտ ձևով, պոեմի ներքին զարգացման բանաստեղծի

խոհերի, յոյզերի ու ապրումների ընթացքի մասին կտրելի է տեսլ հետեւեալը. — Աստուած Նարեկացու համար ամէն տեսակէտից կատարելութեան իդէալն է: Նարեկացին նոյնիսկ ձգտում է հասնել Աստծուն և իր մարդկային բնութիւնը ամբողջապէս խառնել ու միացնել Անոր էութեան հետ: Եւ զգուշ շատ աւելին, նա գտնում է, որ մարդ կարող է նոյնիսկ Աստուած լինել:

Եւ այն, ինչ տեսնւմ անաւոր է, [Բիլ, Գրում եմ այստեղ ես յիշատակ երախտ-կարող եմք լինել մեք Աստուած նոյնիսկ՝
 Եւորհմեքով ընտիր ...

(Բամ ԾԲ. Բ.)

Միջնադարեան պոյմաններում կամ պարագաներում, մականացուի համար իրապէս շատ անաւոր էր անգամ այդպիսի մի պատկերացում ունենալը, մի բան, որ միանգամայն զուրս էր եկեղեցական կարգերի շրջանակներից: Իսկ Նարեկացու հիւմանիզմը խիզախում (համարձակում) է մարդ տրարածը հասցնել մինչև այդ բարձունքները: Այստեղ ակիզք են առնում բանաստեղծի ողբերգական ապրումները և տարակոյսները, իսկ ինքը կարող է միանալ Աստծուն և Աստուած գառնալ, երբ իր մեղքերը անընդհատ աճում են ու զնալով սոսկալի չափերի հասնում: Ուրեմն, Դրան հասնելու համար պէտք է մարդու գործերի ու վարմունքների, յոյզերի ու զգացումների աշխարհը ի սպառ մտաուր լինեն ամէն տեսակ ապականութիւնից ու բացասական գծերից: Մարդը կատարեալ մաքրութեան հասնելու համար պէտք է որ խոստովանի ու անխնայ դատապարտի իր գործած մեղքերը: Նարեկացին անսահման յիշողու-

թեամբ իրեն է վերագրում մեղքեր ու յանցանքներ, միևնոյն ժամանակ խստօրէն դատապարտում է այն բոլոր բացասականը, ինչ որ նա տեսել է մարդկային կեանքում ու իրականութեան մէջ:

Նարեկացին քաջօրէն գիտակցում է, որ մարդկային ծնունդներից ոչ ոք իր չափի մեղաւոր է եղել, որովհետեւ ինքը անկարող է եղել մտքի երկվարը բանականութեան սանձով կանգնեցնել և շատ մոտ խորհուրդների միջից սլանալով, մարդկանց գործած բոլոր հին չարիքներին նորեր է աւելացրել: Նոյնիսկ իր Արարչին դէմ միշտ նենգաւոր է գտնուել և ըմբոստացել է Նրա դէմ: Իրականութեան մէջ նա աստուածամարտ մտածումներ է ունեցել ու բնաւ չի վախեցել Նրա սպառնալիքներից:

Նարեկացու պոեմում շատ անգամներ կործանուելու սարսափներին յաջորդում է փրկութեան յոյսը, կապում է գործած մեղքերին՝ ամենադաժան խոստովանութեան հետ, նոյն ժամանակ միշտ աւելի ու աւելի գերադարձան աստիճանի բարձրացում, արտայայտչական աւելի ու ժեղ ու նոր ձևերի մէջ մարմնաւորում: Այսպիսով ստեղծւում է պոեմի արտակարգօրէն յուզիչ, հոգեկան դրամատիկ դրութիւններով շատ հարուստ ընթացքը, որը սակայն պէտք է որ ունենար իր աւարարը: Այստեղ պոեմը վերջանում է լուսատեսութեան յաղթանակով, փրկութեան և աստուածային կատարեալ էութեան հետ միանալով՝ աստուածանալու հաւատքով, բայց այդ միայն այն բանից յետոյ, երբ անդառնալի կորստեան սարսափը այնպիսի վիթխարի չափերի է հասնում, որը միայն Նարեկացու հանձարը կարող էր պատկերել:

(Մնացեալը յաջորդիւ)

ՌՈՒԲԵՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

